



ԲՈՒՂԱՐ ՕՐԹՈԴՈԽՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ,
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐՔԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ժամանում

Ամենայն Հայոց Վենափառ Հայրապետի հրավերով Հունիսի 2-ին՝ ուրբաթ օրը, Մայր Աթոռ է ժամանում Բուզար օթիոդոքս եկեղեցու պետ, Նորին Սրբություն Տ. Կիրիլ պատրիարք՝ փոխադարձելով Հայոց Հայրապետի 1965 թվականի հունիսին Բուզարիա կատարած այցելության:

Նորին Սրբության շքախմբի կազմում էին Սլիվենի միտրոպոլիտ ա. Նիկողիմ արքեպիսկոպոսը, ա. Իոան վարդապետը և դոկտ. Վասիլի Վլիխանով սարկավագ-քարտուղարը:

Բուզար եկեղեցու պետին ուղեկցում էին Հյուսիսային Կովկասի և Մոսկվայի Հայոց թեմի առաջնորդ ա. Պարգև եպս. Գևորգյանը, Ռումինիայի և Բուզարիայի թեմի առաջնորդ ա. Տիրայր եպս. Մարտիլյանը և Բուզարիայի Հայոց թեմական խորհրդի ատենապետ Օնիկլ Ասլանյանը:

Երևելյան ժամը 18-ին ինքնաթիւոր երկար և հանգիստ թիվքից հետո իշնում է Երևանի օդանավակայան:

Քույր եկեղեցու հոգևոր պետին անձամբ դիմավորում է Հայոց Հայրապետը՝ շրջապատված իր շքախմբով, որի կազմում են լուսարարապետ ա. Հայկազոն արքեպիսկոպոսը, ուստավորաբար Մայր Աթոռում գրտնը լուղ ա. Սերգի արքեպիսկոպոսը, ա. Հովհաննիկ, ա. Վահան, ա. Մաշտոց եպիսկոպոսնե-

րը, ա. Ներսես ծ. վարդապետը, ա. Մուշեղ, ա. Նարեկ, ա. Գևորգ վարդապետները, Երևանի թեմի քահանայից դասը, Գերազուն հագեց խորհրդի անդամները, «ՀՀմիաժխն» ամսագրի խմբագրական կազմը, մայրավանքի պաշտոնեալիունը և Հավատացյալների բազմությունը:

Բուզարիայի սրբազն պատրիարքի ժամանումը ողջունում են նաև Հայի. ՍՍՀ Սինհստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ կ. Դավթյանը, տեղակալ Ս. Հովհաննեսիսյանը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակության կապի Հայկական ընկերության նախագահ Ռ. Պարսամյանը, սովետարուզարական բարեկամության ընկերության Հայկական բաժնամունքի նախագահ, գրող Գ. Մելքոնյանը և այլ պաշտոնական անձններ:

Ինքնաթիւոր կամրջակի վրա ն. Սրբություն Տ. Կիրիլ պատրիարքի հայտնիելը դիմավորվում է շեմը ծափահարություններով:

Հայոց աշխարհը բարի զալուստ է մադթում եղբայրական բուզար ժողովրդի հոգեվոր պետին:

Հոգիլ է ողջագուրման պահը, երբ երկու բույր եկեղեցիների պետերը՝ Տ. Կիրիլ պատրիարքը և Հայոց Հայրապետը գրկախառն ողջագուրման են, և նրանց ի Քրիստոս սիրո և միության համբուլը մեջ մի անգամ ևս նըլվիրագործվում են Հայ և բուզար եկեղեցի-



Ն. Ս. ՕՇՈՒԹՑՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ

ների և ժողովուրդների բարեկամությունն ու հոգիոր, մշակութային կապերը:

Սյունիքտեսե մեքնանաների շարասյունը ուղղվում է դեպի ու էջմիածին:

Մայր տաճարում

Մայր տաճարի զանգերը ղողանջում են հանդիսավոր ու տոնագան:

Երկու հայրապետները ամպհովանու տակ, եկեղեցական թափորով ու «Հրաշափառ»-ով առաջնորդվում և Մայր տաճար, ուր մուտք են գործում «Ուրախ լեռ ու եկեղեցի» շարականի հնչյունների նորբեր:

Իջման ու սեղանի առաջ երկու հայրապետները իրենց երկրպագությունն ու աղոթքն են մատուցում և ապա առաջնորդվում ատյան: Զախակողմյան դասում բուզար եկեղեցու պետի համար պատրաստվել է մասնավոր գահ:

Տոնականորեն զարդարված և լուսերի մեջ կրկնակի պայծառացած Մայր տաճարի կամարների տակ թնդում է «Փառք քեզ, Տէր Աստուած» բարոզ-մաղթանքը:

Հայոց Հայրապետը իր գահի վրայից ողջունի ու բարիգալստյան եղբայրական իր խոսքն է ուղղում բուզար օրթոդոքս եկեղեցու սրբազն պետին:

«ՈՒՂԻՂ ԵՂԻՑԻՆ ԱՂՕԹՔ ՄԵՐ, ՈՐՊԵՍ
ԽՈՒՆԿ ԱՌԱՋԻ ՔՈ ՏԵՐ

(Մաղմ. ՃԽ 2)

Զերդ Մրբուրյուն Կիրիլ, պատրիարք Բովլարին, հարգարժան և սիրեցյալ եղբայր մեր ի Քրիստու:

Այս լուսավոր պահուն կցնծա սուրբ էջմանինը, կցնծան մեր բոլորին հոգիները, եր Զերդ Մրբուրյունը մուտք կփործ մեր այս պատմական հնագույն տաճարին մեջ, ի գոյս բուզար օրթոդոքս հույր եկեղեցվող պատկանելի պատվիրակուրյան:

Ողջուն Զեզ, բանկագին եղբայր, ողջուն Զեզ, պատվական և բարձրաստիճան հոգևոր հայրեր, որ կրնկերակցիք նորին Մրբուրյան, Զեր մեծանուն պատրիարքին:

Իրապես, մեր կյանքի ամենաուրախ օրերեն մեկը կապրիենք այսօր ոչ միայն, որովհետև մեզի եյուր կուգա հույր եկեղեցվո մը Հովկապեար, այլ նաև, որովհետև մեր հույր երշմարտապես մեր հույր հարգելի և հույր սիրելի եղբայրն է: Մենք իրեւ հայ եկեղեցվո Պետք և առաջին սպասավորը, երջանիկ ենք վայելով եղբայրական և սրտագին բարեկամուրյունը Կիրիլ Մրբազան պատրիարքին:

Մեր բարեկամուրյունը, մեր եղբայրուրյունը անկեղծ է, չերմ է, սուրբ է, որովհետև

խարսխված է մեր Երիստոնեական հավատքի վեմին վրա և դարբնված ու նվիրագործված՝ մեր երկու ծողովուրդներու պատմությամբ:

Հարգելի եղբայր մեր Կիրիլ, մեր երկու բարեկամուրյունը հին է, շատ հին: Մենք Զեզ կեանեանիք, կզնահատենք ու կսիրենք երկու դարերեւ ի վեր, այն օրերեն, եր բուզարենք և հայեր իրարու հանդիպեցան իրենց փորուկանույզ պատմուրյան նախապահի վրա:

Եկ ահա, Աստծո ողորմուրյամբ, խաղաղ ու երշանիկ պայմաններու մեջ Զերդ Մրբուրյունը և Մենք, երկու հին բարեկամներ ու հարազատ եղբայրներ, կողազուրվինք հայ ժողովուրդի հավատքի կեդրոն Միածնակչ այս սուրբ տաճարին մեջ՝ միասին աղոթելու մեր կրոնական հավատքի անսասանուրյան, մեր եկեղեցիներու սերտ գործակցուրյան, մեր ժողովուրդներու բարօրուրյան և աշխարհի խաղաղուրյան համար, այնպէս Մենք միասին աղոթեցինք երկու տարիներ առաջ Սոփիայի և Պավղիմիլի ձեր տաճարներուն մեջ, եր Զեր եղբայրական հրավերով հյուր եղանք Զերդ Մրբուրյան, ծեր սփանչելի երկին, լոյս ու ծաղիկ նուզարիու մեջ:

Թող Զերը բաղցրուրյամբ ընդունել մեր աղորդները և ուղիղ, որպէս խունկ:

Թող տերը օգնել և ենշշնչե զմեզ, որախազի մեր օրերուն կարողանանք առավել եռանդով շերմացնել եղբայրուրյունը և գործակցուրյունը մեր եկեղեցիներու միջե և բարեկամուրյունը՝ մեր հավատացյալ ժողովուրդներու միջե:

Թող Զերը հավետ անշարժ պահե բուզար օրբորու սուրբ եկեղեցին և միշտ խաղաղ ու բարգավաճ՝ բուզար ազեվասիրտ ազգր:

Թող Զերը կինաց երկար տարիներ պարզեց: Զերդ Մրբուրյան՝ շարունակելու համար Զեր հովկապետական սուրբ առափելուրյունը, Զեր հատկանշող մտքի պայծառուրյամբ և հայրական բարուրյամբ:

Զեր արեշատուրյունը, Զեր հաջառողջուրյունը, Զեր գործունեուրյունը բուզար եկեղեցի պատրիարքական Արռողին վրա, նաև Մեր և համայն եկեղեցվո ու ժողովրդի միխրաբուրյունն է:

Զերդ Մրբուրյուն, բարի եկամ ու էջմիածին և երկիրը մեր Հայաստան: Զեզի Մեր եղբայրական ողջունը, Մեր սերը, Մեր հագանքը և Մեր սիրար ամբող:

Ուղիղ եղիցին աղօրք մեր, որպէս խունկ առաջի քո Տեր:

Հայոց Հայրապետի խոսքի բուզարերէն թարգմանությունը ընթերցում է արվեստի վաստակավոր գործիւ, բանդակագործ Գր. Անարոնյանը:

Նորին Սրբություն Տ. Կիրիլ պատրիարքը Հայոց Հայրապետի ողջունի խոսքին պատասխանում է հետևյալ ճառով:

Զերդ Մրգություն, սիրելի Քանանայապետ,

Ես և ուղեկիցներս երշանիկ ենք, որ ուաղինն Աստուծուց օրինված հայկական հողի վրա՝ Ձեզի մասուցելու համար բոլոր օրողուն եկեղեցու ողջուններն ու բոլոր սրբությունների օրինությունը:

Երշանիկ ենք, որ շնորհիլ Ձեր գերազնի հյուրենիկապուրյան պիտի տեսնենք Հայաստանի գեղեցկություններն ու հայ ժողովրդի ստեղծագործական բարձր ոգին, հիմանալու հավատացյալ ժողովրդի բարեպաշտության վրա ու դարձյալ զգալու հայ սուրբ եկեղեցու նվիրականությունը:

Մրտանց շնորհակալ ենք Ձեզանից, Մրգան Հայրապետ, եղբայրական հրավերի և շերմ ընդունելության համար, որ մեզ ցույց տրվեց հայկական հողի վրա ուաղ դեմքու առաջին խկ պահից: Սույն հյուրենիկապուրյունը մեզ համար խիստ բանկացնի է, որովհետև համոզված ենք, որ այն բխում է Ձեր քրիստոնության մտերմաւրյան ակունքներից:

Ս. էշմիածնի կարաղիկոսական Արորոի լուսավոր անունը հայտնի է ողջ Քրիստոնեական աշխարհի մեջ որովհետև այն ընդհանրական Քրիստոնեության հնագույն եկեղեցիներից մեկն է, որ բազում դարերի ընթացքում սրբության հառաջայրենք է տարածել:

Մեր այցելությունը ի Քրիստոս սիրելի եղբայրներին, սովորական մի հանդիպում է: Հաս ինչյան անսովոր ոչինչ չկա դրա մեջ, որովհետև գիտենք, թե եղբայրները պետք է միասին ապրեն: Սակայն սույն դարաշրջանը, երբ Քրիստոնեական եկեղեցին աշխարհի մեջ ամենուրեք պետք է Քրիստոսի հանդեպ իր հավատամության պատցույցը առ, մեր երկու եկեղեցիների Հայոց ս. եկեղեցու և բոլոր ս. եկեղեցու դեկապարեների, սպասավորների և հավատացյալների վրա մեծ պարտավորակություններ է դնում: Սույն պարտավորությունները նախ և առաջ վերաբերվում են Քրիստոնեական եկեղեցիների ներքին կյանքին, որովհետև բոլորը պետք է ամենանախադուն նիգեր բախին եկեղեցիների մերձեցման համար ինչպես կրոնասիրության, նույնպես և Քրիստոնեական սիրությունների անդամ է աշխարհը, Վիետնամի անդոք պատերազմի պատճառվ և աշխարհի զանազան անկյուններն առկայունող եղբայրասպան կորիւների օջախները բոլոր եկեղեցիների վրա ուղակի պարտ և դնում բազմապատկերության փառական պատճառ: Սա երկու պարտավորության փառական պատճառ: Սա յանական պատճառ:

Երբյունների կատարումով, մեր հանդիպումն է՝ խաղաղության, Քրիստոնեական հշմարտության և մարդկանց հաճարյան ուղղի վկայության համար ավելի բարձր իմաստ է ստանում:

Ես և իմ հարգարժան ուղեկիցներս ուրախ ենք, որ Ձեր սիրելագույն Մրգությունն էլ այսպես է բմբնում եկեղեցական պատասխանատու զեկավարների յուրաքանչյար հանդիպումը: Հետեւքար մեր այցելությունը, ինչպես և Ձեր հիմանալի հյուրենիկապուրյանը, աշխարհի խաղաղության և մարդկանց եղբայրության գործին որոշ նպաստ են ներկայացնում:

Ի Տեր Եղբայրական սիրով՝ ձեր հողի վրա սրագինս ողջունում եմ Ձեզ, Մրգան Հայրապետ, ու խոր անկեղծությամբ արտահայտում մեր եկեղեցու լավագույն և լուսավոր զգացումները Ձեր Մրգության և Հայաստանյաց սուրբ եկեղեցուն, որի արծանավոր գահական եք Դուք:

Թուղարահայ թեմական խորհրդի ատենապետ Օննիկ Ասլանյանը ընթերցում է Տ. Կիրիլ պատրիարքի ճանիքներն թարգմանությունը:

Եկեղեցական արարողության ավարտին Ն. Ս. Կիրիլ պատրիարքն ու Հայոց Հայրապետը նույն հանդիպությամբ առաջնորդվում են վեհարան, ուր առանձին կահավորված մի հարկարաժին է հատկացվում Մայր Աթոռի թանկագին հյուրին, ինչպես նաև նրա շքամբը անդամներին:


Հունիսի 2-ը որպես անմոռանալի մի նոր էջ, այսուհետև կպարզաբի բոլոր և հայ եկեղեցիների և եղբայրական ժողովուրդների դարավոր պատմությունը, շնորհաբեր երկրորդ այցելությամբ ամենապատիվ Տ. Կիրիլ սրբազն պատրիարքի:

«Ճի՛ բարի, զի՛ գեղեցիկ և վայելու, զի՛ բնակեցն եղբարք ի միասին»:

Այցելություն Գառնիի ավերակները և ուստագնացություն Գեղարդա վանք

Հունիսի 3-ին՝ շաբաթ օրը, առավոտյան ժամը 9.30-ին, երկու հայրապետները իրենց շքախմբերի ընկերակցությամբ նախ ուսման գնում Գեղարդա վանք և ապա այցելում Գառնիի ավերակները:

Պատմական վանքի զանգերի ուրախ զողանքի ներքո, երկու հայրապետները խնկով ու շարականով դիմավորվում են վանահայրական հայրապետի կողմից և «Հրաշաշափառ»-ով առաջնորդվում եկեղեցի՝ իրենց աղոթքը կատարելու: Վանահայր վարդապետը Տ. Կիրիլ պատրիարքին և նրա շքախմբի անդամներին տեղեկություններ է հաղորդում Գեղարդա



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ S. ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐՔ

հոչակավոր վանքի շինության պատմության, ճարտարապետության, Գեղարդի հոգևոր բարձրագույն տիպի դպրոցի, վանական այլ շինությունների և բարեպաշտ Պոռշյան Հայ իշխանների մասին, որոնց նյութական ու բարոյական բարերարությամբ, միջին գարերում, և հատկապես ԺԴ-ԺԴ. դարերում Գեղարդի վանքը հանդիսացել է Հայ հոգևոր մշակույթի, գրչության արվեստի վառ օջախներից մեկը:

Հյուրերը հանգամանորեն ծանոթանում են վանքի պատմական, և կեղեցական հուշարձաններին, խաչքարերին:

Այնուհետև մեքենաներն ուղղվում են գեղի Գառնիի ավելակներու:

Տ. Կիրիլ պատրիարքը և իր շքախմբի անդամները ծանոթանում են Գառնիի ամրոցի, Հեթանոսական տաճարի, քրիստոնեական և կեղեցու և հարակից շինությունների պատմության, կառուցղական արվեստի և ճարտարապետության հետ:

Ի պատիվ Տ. Կիրիլ պատրիարքի՝ համերգ վեհարանի դահլիճում

Հունիսի 3-ին՝ շաբաթ օրը, երեկոյան ժամը 18-ին, երկու հայրապետները Մայր տաճարում ներկա են լինում երեկոյան ժամերգության:

Ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, վեհարանի հանդիսության դաշինում, ի պատիվ Տ. Կիրիլ սրբազն պատրիարքի, տրվում է Համերգ, որին իրենց մասնակցությունն էին բերել:

Հոգեու նեմարանի երգախումբը՝ «Որք զարդարեցին», «Նմանեալ Սովորիսի», «Անձինք նուիրեալը շարականներով»: Ա լարանի ուսանող Հովհ. Գրվագիանը՝ «Այսօր ցնծա» մեներգ-շարականով:

Հայտնի դաշնակահար Վահե Անարոնյանը, որը կատարում է դաշնամուրի վրա երեք երաժշտական գործեր, Զայկովսկի՝ «Բարկարուա», Կոմիտաս վարդապետ՝ «Կաքավիկ», Լիստ՝ «Ճարանտեղա»:

Մարգարիտ Մանվելյանը բուզզարերեն լեզվով արտասանում է բուզզար նշանավոր բանաստեղծ Յավորովի «Հայերը» բանաստեղծությունը, իսկ Գրիգոր սարգավագը՝ նույն բանաստեղծության հայերեն՝ ի որգանությամբ Սիլվա Կապուտիկյանի:

Վաստակավոր երաժիշտ Անահիտ Ցիցիկյանը զութակի վրա կատարում է, նորա Ստեփանյանի դաշնամուրի ընկերակցությամբ, Ջատկ-Զենկինի «Սևտանա»-ն (բուլղարական), Բաղդասարյանի «Նոկտուրն»-ը և Կոմիտաս վարդապետի «Կոռոնկ»-ը:

Վաստակավոր երաժիշտ Խօսքելլա Այդինյանը, կենոնորա Ստեփանյանի դաշնամուրի ընկերակցությամբ, կատարում է Հարո Ստեփանյանի «Հեղին, Արագած»-ը, Լուկովիցկու «Մոմի» բուզզարական երգը և Կոմիտաս վարդապետի «Չինար ես»:

Համերգը նցրափակվում է Մայր տաճարի երգեցիկ խմբի ելույթով. Կոմիտաս վարդապետ՝ «Գարուն ա», Զայկովսկի՝ «Տէր ողորմեա», Մ. Եկմալյան՝ «Սուրբ, սուրբ»:

Միրված երգունի Մարիա Գեղունին ապրում և հուղումով կատարում է, դաշնակահարունի Սիրվա Սվանյանի նվազակցությամբ, Կոմիտաս վարդապետի «Հաւուն» և «Ենիկի ծառի նման ես» շարականմեղեղիները:

Երգեցիկ խումբը առանձին խանդավառությամբ կատարում է «Կիրիլ և Մեֆոդիոս»-ին նվիրված բուզզարական մաղթերգն ու Հայրապետական կոմիտասյան մաղթերգը՝ «Ամեն Հայի սրտից բիսած»:

Համերգն անցնում է շերմագին մթնոլորտում, փայլուն հաջողությամբ:

Վերջում Տ. Կիրիլ պատրիարքը իր շերմ գործնակությունն ու շնորհակալությունն է Հայտնում Համերգի մասնակիցներին՝ իր օրնությունը բաշխելով բոլորին:

Հայրապետական Ա. պատարագ և քարոզ Մայր տաճարում

Հունիսի 4-ին՝ Կիրակի: Գարնանային շերմ ու սկիսա արել սուկեզօծել է Արարատյան դաշտը ու բոլորի սրտերը:

Հայրենի բնությունը ևս իր ուրախությունն ու հրավանքը միախանուն էր Մայր Սթոռի հանդիսությանց:

Ժամը 11-ն՝ է Մայր տաճարի զանդերը ղողանիում ևն հսնդիմակեր ու տոնական:

Հայոց Հայրապետը վեհարանում, Հայրապետական լրիդ զգեստավորման մեջ, բուզզար օրթոդոքս եկեղեցու պետ, ն. Սրբություն Տ. Կիրիլ սրբազն պատրիարքի հետ, ամպհովանու տակ, և կեղեցական թափորսի խնկով ու աղոթքով առաջնորդվում է Մայր տաճարը՝ Հավատացյալ հոծ բազմության-ուրախության, բարեմազթությանց արտահայտությունների ներքո:

Տաճարը ևս լցվել է աղոթավոր բազմությամբ: Դասերում տեղ են գրավել պաշտոնական անձինք, ուխտավորներ:

Զախակողմյան զասում, իր գահի վրա է Կիրիլ սրբազն պատրիարքը՝ իր շքախմբի անդամներով շրջապատված:

Սկսվում է Հայրապետական Ա. պատարագը:

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Ուզիլ եղիցին աղօթք



Տ. Կիրիլ պատրիարքը Մայր տաճարում և պատարագի ընթացքում (հունիս 4)

մեր, որպէս խունկ առաջի քո *Տէր»* բնաբանով:

Ն. Ա. Օծությունը իր քարոզի վերջում ողջունում է բոլղար օրթոդոքս եկեղեցու պետ, Ն. Սրբություն Տ. Կիրիլ պատրիարքի ներկայություննը՝ շեշտելով, որ այս օրը պատմական է, որովհետև Մայր Աթոռ ս. Էջմիածին հյուր է եկել քույր եկեղեցու հովապետը, և Հայ և բոլղար եկեղեցիների եղբայրությունը սուրբ է, չերմ և անկեղծ, որովհետև խարըսխաված է մեր քրիստոնեական հավատքի վեմի վրա: Այնուհետև Հայոց Հայրապետը սրտագին քարեմաղթություններ է անում բուզղար և Հայ եկեղեցիների և երկու եղբայր ժողովուրդների պայծառ ապագայի, քարօրության և աշխարհի խաղաղության համար:

Հավարտ ս. պատարագի, երկու հայրապետների ներկայության, Մայր տաճարում կատարվում են բուզղարերեն լեզվով մաղթերգ, ինչպես նաև Հայրապետական մաղթերգը, որից հետո սրբազն քահանայապետերը եկեղեցական թափորով առաջնորդվում են վեհարանի գահարահ:

Հանդիսություն գահարահում

Եկեղեցական թափորը «Որ զնորհս» շարականի երգեցողությամբ բարձրանում է վեհարանի հանդիսության մեծ դահլիճը և կանգառնում գահարահում:

Երկու հայրապետները բազմում են իրենց դահլիճի վրա:

Հայոց Հայրապետը հոգեպես ուրախ, մի անգամ ևս ողջունելով Տ. Կիրիլ սրբազն պատրիարքի ներկայությունն ու այցելությունը Մայր Աթոռ, ասում է.

Զերդ Մրգուրյան, քանկագին և սիրելի եղբայր մեր ի Քրիստոս,

Անավասիկ մենք բոլրս կրկին համախմբած ենք այստեղ՝ արտահայտելու համար Զեզի մեր եկեղեցիի և մեր ժողովուրդի անսահման սերը, խոր գեամատանքը և հարգանքը:

Զերդ Մրգուրյան, մեզի համար Դուք կը ներկայացնեք ոչ միայն հույր եկեղեցի մը, այլ նաև եղբայրական ժողովուրդ մը և բարեխնամ, հյուրընկալ երկիր մը: Մենք Զերանձին մեջ կտեսնենք բոլղար օրբողու սուրբ եկեղեցին սուրբ ներշնչումներով, իր

ՏՐՈՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿՐՈՆԻ ԳԱՀԱՄԱՍՆՈՒՄ (ՀՈՒՆԻ 4)



հոգի բոլոր գեղեցկուրյուններով ու արժեքներով, կտևենենք բազար հավատավոր ու մարդասեր ծողովուրյոր՝ իր հոգեկան առաջինուրյուն, իր ներսական անցյալով և իր ներկա հոյաշեն իրազուրումներով, ու կտևենենք նաև ձեր հապարակ, չեղ ու փարամ, արևով ու ծաղիկներով լեցուն, ձեր մեծանոցի հայրենիքը, որ անցյալ դարուն իր գիրկը լսյի բացավ, առանց սակարելու հայ ծողովուրյորի հալածական, բազմաշարշար զավակներու առաջ, որոնք խոնավահար կրափախչին օսմանյան արյունարքու սուլթաններու յարազանեն փնտութու համար կյանքի ապահովուրյուն և ազատուրյուն: Եվ հայերը գտան բոլղարի մեջ ոչ միայն կյանքի ապահովուրյուն և ազատուրյուն, այլ շատ ավելին, անոնք գտան հշմարիտ հարազատ հայրենիք մը, որ ոչ մեկ խարուրյուն դրավ անոնց և բնիկ իր զավակներուն միջև՝ ընծայելով անոնց ամեն հնարավորուրյուն, որ ապրին ու անին իրենց հայրերու հավատենով, իրենց ավանդուրյուններով, մշակույրով ու մայրենի լեզվով:

Դուք, Զերդ Սրբուրյան, խորենդանշանն եք այս բոլոր իրազուրյուններուն, այս բոլոր բարիքներուն: Զեր լուսավոր, բարի դեմքը հշմարիտ զեմքն է բազար ծողովուրյորին ու բոլղար հայրենիքին:

Հետեարար բույլ տվել, որ հանուն հայ եկեղեցին և հայ ծողովուրյորի ու մահավանդ հանուն բոլոր այն հայերուն, որոնք դաւեւ շարունակ վայելեցին բարիքները բոլղարներու հոգիին ու հողին, շնորհակալուրյուն հայանենք Զերդ Սրբուրյան երախտապարտ սրտով:

Պատմական անցյալի և հոգեկան հարազատուրյան այս ամուր հիմերու վրա կզարդանա մեր այսօրվան եղբայրուրյունը և գործակցուրյունը եկեղեցական կյանքին մեջ: Մեր օրերուն Դուք և Մենք և մեր եկեղեցիները կոչված են կուոմնեիկ ողիով գտնեպինդ, միացյալ ուժերով աշխատելու, որպեսզի առավել ամրապնդի բրիտոննեական հավատքի և սիրո միուրյունը աշխարհի մեջ, որպեսզի եկեղեցիներու միջոցավ ծողովուրյունները ավելի գիրար հանշեան, գիրար հասկրեան ու գեանատեն, և որպեսզի մեր երկրագունդը դառնա խաղաղ ու բարօր կյանքի աշխարհ մը, աշխարհ մը, ուր ծողովուրյունները ապրին արդար ու ազատ իրենց կյանքի՝ առանց մեկ մյուսին վրա սուրբ բարձրացներու: Մեր բրիտոննեական հավատքը Մենք կնրկատենք մեր ամենահզոր բարոյական զենքը բնդիմ պատերազմին: Եվ, անկասկած, Աստված պիտի օրին մեր գործը և օգնական պիտի մենա միջտ մեզի՝ մեր խաղաղարար առաքելուրյան հանապարհին վրա, վասնզի

մեր Աստվածը մարդասեր Աստված է և խաղաղուրյան Աստված է:

Ավելի բայս, ավելի սեր և ավելի խաղաղուրյուն մարդոց և աշխարհին համայն:

Այս զաղափանըներու և զգացումներու շողակարումն ներքին ինչշան պայծառ ու վիճու կեառազայքը մեր՝ երկու պատրիարքներուս բարեկամուրյունը և միատեղ աշխատանքը:

Թող ողորմածն Աստված բաղցրուրյամբ լս մեր ձայնը և Զեզի պարզեց, սիրեցյալ պատրիարք նղբայր, ամուր ու կայուն առողջուրյուն, որպեսզի տակավին երկար տարիներ հոգվապետական զավագանը Զեր ձեռնիքն շարունակի առաջնորդի ձեր եկեղեցին և ծողովուրյոր և ծառայել եկեղեցիներու և ազգերու եղբայրուրյան ու աշխարհի խաղաղուրյան սրբազն դատին:

Կեցցե Նորին Սրբուրյուն Կիրիլ պատրիարքը:

Կեցցե և հավետ փառավոր մենա բուլղար օրորդուս եկեղեցին:

Կեցցե և միշտ խաղաղ ու ծաղկյալ զարգանա մարդասեր Բուլղարիան:


Ապա Վեհափառ Հայրապետը, ի նշան եղբայրական սիրո, Տ. Կիրիլ պատրիարքին նվիրում է Հայրապետական ոսկյա ասա, որի վրա փորագրված են ս. էջմիածնի և Սոգիայի Մայր տաճարները:

Նորին Սրբություն Տ. Կիրիլ սրբազն պատրիարքը պատասխան ողջույնի իր խոսքում ասում է.

Մենք, որպես բուլղարական պատրիարքուրյան առաջյաները, եկել ենք Զեր Սրբուրյան և Զեր զեկավարած դարավոր կարողիկոսական Արքունի մատուցելու նրա սրտագին ողջույնները և սուրբերի օրենուրյունը, սուրբեր, որոնք ծնվել են բուլղարական բրիտոննեական բարեպաշտուրյան ծոցից: Զեր մատուցելով սրբուրյան և սիրո սույն ողջույնը, մենք հավատում ենք, որ հետզետե առավել և կամրապեդվի ի Տեր Հիսուս Քրիստոս մեր միասնականուրյունը:

Մասնավորապես ուրախ եմ, որ Աստված հանեցավ, որպեսզի Զեր սիրելագույն Սրբուրյան երական դարձալ ոտք դնենք արևաշող Հայաստանի հողին վրա՝ շերմացած բազմադարյան էջմիածնի հոգեւոր լուսիսից, հիմնված բրիտոննեական հավատքի մեծ լուսավորիչ սուրբ Գրիգորից, որի գործը շորորդ դարի սկիզբը կատարեց հայ ծողովուրյորի վերծունդը ինչպես հոգեւոր, հույնապես և լուսավորուրյան ու հասարակական-պետական տևակետից:

Առաջին անգամ չէ, որ գտնվում եմ Հայաստանի մեջ, և առաջին անգամ չէ, որ ս. էջմիածնի կարողիկոսական Արքունի լուսավոր շողերը իմ հայացքն լուսավորում են՝ օրենարեց մի ակնարկ զցելու ձեր ծողովուրյունը



բրիստոնեական հեռավոր անցյալի վրա և ոգեշնչված ակնարկով քափանցելու սուրբ էջմիածնի ապագաս հոգեստ հակատագրին մեջ, այն բաղաքին մեջ, ուր Աստված իշավ, և սուրբ Գրիգոր Լուսավորիչ Տրդատ Յ-ը քաղաքոր բրիստոնյա դարձեց՝ հայ ժողովրդի պատմական նոր կյանքի սկիզբը դնելու համար:

Հետո ի վեր ձեր երկրի մեջ կատարվում է վերելիք նիզ ու աշխատանք, սակայն հայ ժողովրդի ապրել է նաև բազում տառապանքներ՝ միշտ ճգնաւոր դեպի երշաբիկ ապագա: Իսկ հայ սուրբ Եկեղեցին չէ դադրաց ժողովրդի լուսավորության փառու հանդիսանալուց, երբ մուր ամպեր ծածկած են երա հակատագիրը: Չեր հախանայեցեր դարեւ շարունակ հոգեստ հարստություններ են կոտակել, որոնց ժառանգորդներն են դուք: Մենք հավատում ենք, որ սույն ժառանգորդյունը հետագիտեա պիտի ավելանա՝ ամբողջ հայ ժողովրդի աշխատանքով և եռանդով՝ կյանքի բոլոր բնագավառներում երշաբիկ ապագա ստեղծելու համար:

Երբ 1958-ի գեղագվարն մայիս ամսվան մեջ պատիվ ունեցած նորին Սրբություն Վազգեն Ա-ից առաջին անգամ հրավեր ստանալու, իրեն հյուր ըլլալու, միաժամանակ և Հայաստանյաց ս. Եկեղեցիին, հետագործություն ունեցած տեսնել շատ բարեր, սակայն այն, ինչ որ ինձ վրա անպատմելի տպագործության գործեց, ձեր ժողովրդի ստեղծագործական և մշակութային հետանին էր, Եկեղեցական և կրոնական շինարարության մեջ՝ Սրբազն կարողիկոսի և իր օգնականների շանելով: Այն ժամանակ ես ավելի սրբեցի իմ Սրբազն Եղբայր՝ սուրբ էջմիածնի կարսողիկոսական Արոռի Գահակալին: Ես ծանոթ էի Նորին Սրբության հախապես էլ, երբ Նա եպիսկոպոս էր Խումանիս և Թուղարիս հայերին: Սակայն ավելի մտտիկից նախաշեցի երան՝ աշխարհի խաղաղության պահպանման համար մեր կատարած համատեղ աշխատանքին մեջ: Խոս 1965-ին ես բավարար եպիսկոպոսական, բահանայական դասի և հակատացյալ ժողովրդի հետ, ինչպես նաև մեր հայրենասեր բոլոր բաղաքացիների հետ, Սոֆիայի մեջ, բախտը ունեցան սիրու և բարձր հարգանքի Եղբայրական բաց գրկով բնարկելու ն. Սրբություն Վազգեն Ա-ը և իրեն հարգարժան ուղեկիցները՝ որպես հյուր բուլղար պատրիարքաների այցելությունը Եղբայրության և հակատացյալ դասի մեջ է, ինչ որ ավելացնում է երա անձնական և Հայաստանյաց սուրբ Եկեղեցու հեղինակությունը: Այս ավելացնում է նաև մեր սեր հանդեպ Սրբազն կարողիկոսին, որի անձին մեջ տեսնում ենք մտերիմ,

առիք եղավ մեր սեր արտահայտելու հանդեպ հայ ժողովրդին, ինչպես և վերիշելու հիմնային՝ 50 տարիներ առաջ, երբ Արդար Համբարձու Օսմանյան Կայսրության մեջ հայ ժողովրդը չարդի ենթարկվեց: Այս օրերին բազար ժողովրդը ընդունեց հայ գաղքականներին, բշվար հայ բեկորներին իր երկրի մեջ՝ աշխատանքով և պատվագ իրենց հացը շահելու պայմաններ ստեղծելով երան: Դրանցից շատերը այսօր էլ ապրում են բուլղարական հոգեստ վրա և իրենց հայլական ծագումին և հայրենիքին հավատարիմ մնալով հանդերձ, իրենք իրենց զգում են ուղարկելու հայրենիքի մեջ:

Ամենայն Հայոց կարողիկոսությունը միշտ մեծ հեղինակություն է վայելել: Դրա պատճենները շատ պարզ են: Այսօր էլ սուրբ էջմիածնի ներկայիս Գահակալ, նորին Սրբություն Վազգեն Ա-ը իր իմաստությամբ և սիրով ստեղծում է հոգեստ միամանությունը հայ ժողովրդի ծոցում ինչպես արեանող Հայաստանում, հույնական էլ աշխարհում ցրված հայության միջև:


Նվազ կարեւոր չէ նույնպես ն. Սրբություն Վազգեն Ա-ի էկումենիկ և խաղաղասեր գործունեությունը:

Քրիստոնեական էկումենիզմը սրբազն գործ է, որն իրազործվում է համաշխատնեական լայն հիմունքի վրա: Աստուծ եկեղեցիները իրար պետք է մերձենան կրոնասրբական-քրիստոնեական մտահկության ուժով:

Հայաստանյաց սուրբ եկեղեցու հեղինակությունը ներգիտեա անում է նույնպես ն. Սրբություն Վազգեն Ա-ի խաղաղության դատի գործուն մասնակցության շնորհիվ:

Մենք գիտենք, թե բոլոր մարդիկ խաղաղության են ճգնում, սակայն գիտենք նաև, որ խաղաղության համար աշխատելու պատվերը ստացել ենք մեր Փրկիչ, խաղաղության իշխան Տեր Հիսուս Քրիստոսից: Նա աշխարհ եկավ որպես խաղաղության ավետարեր և կատարող: Նա իր աշակերտներին կտակեց, ինչպես և Եկեղեցներին կտակեց, խաղաղությունը, որպես աստվածային պատվեր և գերազայն բարիք: Այս պատճենու կուժենացնենք մեր խաղաղասիրական աշխատանքի՝ այսպիսի արտահայտիչը հանդիսանալով ամբողջ մարդկության ամենաբարենկագին իդարին:

Ն. Սրբություն Վազգեն Ա-ի միշազգային շափանիշով խաղաղության դատին մուծած լուման մեծ է, ինչ որ ավելացնում է երա անձնական և Հայաստանյաց սուրբ Եկեղեցու հեղինակությունը: Այս ավելացնում է նաև մեր սեր հանդեպ Սրբազն կարողիկոսին, որի անձին մեջ տեսնում ենք մտերիմ,



Տ. ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԻՐ ԾՐԱՆՄՐՎԿ ԵՎ ՎԵՋՄՓԱԼ ՀԱՅՐԱՊԵՏԵԾ ՄԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՆ

անկեղծ եղբայրը և աստվածային վարդապետուրյան սպասավոր:

Մրտագին կաղորեմ երկնային Հոր՝ իրարեգործ Ազով միշա օրհնելու Հայաստանյաց սուրբ եկեղեցին, որպեսզի նա հաստատ մեա փրկարար Եղմարտորյան, քարի հայ ժողովուրդը առաջադիմի նոցեոր, ենուրայն և հանրային հաջողորյան մեջ: Խոկ Ն. Ս. կարողիկոս-պատրիարք Վազգեն Ա-ի սիրո լցվի բազմապատիկ ուրախորյանք և աստվածային ողորմուրյուններով, որնիք պիտի իշենք իր սիրելի ժողովրդին վրա:

Թող Աստուծու ողորմուրյունը իշենի բոլոր հայրենին վրա և մեզ համար էլ բանկագին ձեր հայրենիքին վրա:

Նորին Մրեսությունը իր խոսքի ավարտին Հայոց Հայրապետին նվիրում է բոլղարական մի գեղեցիկ ոսկեղօծ սրբանկար:

Դաշասրահում հանդիսությունն ավարտվում է Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Պաշտոնական ընդունելություն վեհարանում

Ժամը 3-ին վեհարանի սեղանատանը պաշտոնական ճաշկերույթ է կազմակերպվում ի պատիվ Մայր Աթոռի թանկագին Հյուրի՝ Տ. Կիրիլ պատրիարքի:

Ընդունելության ներկա են բոլղար պատրիարքական անդամները՝ տ. Նիկոլամ միաբանութեար, տ. Խոան վարդապետը, Վասիլի սարկավագը:

Ճաշկերույթին մասնակցում են նաև Մայր Աթոռի և թեմերի բոլոր եպիսկոպոսները՝ տ. Հայկազուն, տ. Սերովը արքեպիսկոպոսները, տ. Կոմիտաս, տ. Հովհաննի, տ. Մաշտոց, տ. Վահան, տ. Պարգև, տ. Տիրայր եպիսկոպոսները, տ. Մուշեղ, տ. Ներսես, տ. Նարեկ, տ. Գևորգ վարդապետները, Գերագույն Հոգեվոր խորհրդի և Վերստուգի Հանձնաժողովի անդամները, «Եղմիածին» ամսագրի խմբագրական կազմը, բոլղարահայ թեմական խորհրդի ատենապետ Օննիկ Ասլանյանը, երաժշտագետ Մ. Թոմաճանը, քանդակագործ Գր. Ահարոնյանը, պրոֆ. Գ. Մեղնիկյանը:

Հյուրերի թվում են ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլարյանը, տեղակալ Ս. Հովհաննիսյանը, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի Հայկական ընկերության նախագահ Ռ. Պարսամյանը, Եղմիածինի շրջանի գործադիր կոմիտեի նախագահ Հ. Սեղրակյանը, Սիյուռքի հետ մշակութային կապի ընկերության ներկայացուցիչ Գր. Բեքմեղյանը և ուրիշներ:

Մեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը: Մայր Աթոռի բարիքներով զարդարված սե-

ղանների շուրջ ստեղծվում է քրիստոնեական եղայլության չերմիկ մինուլոր:

Ընդունելության ժամանակ գոխանակվում են սրտագին ողջույնի և բարիգալստյան խոսքեր: Բաժակներ՝ են առաջարկվում Հայոց Հայրապետի, Տ. Կիրիլ սրբազան պատրիարքի և ոռուական պրավուլավ եկեղեցու պետ, Ն. Ս. Ալեքսի պատրիարքի կենաց, Հայ, ոռու և բոլղար եկեղեցիների և նորայրական ժողովուրդների անքակտելի եղբայրության, բարեկեցության և պայծառ ապագայի կենաց:

Քրիստոնեական եկեղեցիների ի Քրիստոս Համագործակցության, ժողովուրդների բարեկամության, աշխարհի խաղաղության նվիրված Հայրենասիրական, խանդավառ ելույթներով Հանդես են գալիս՝ վեհափառ Հայրապետը, Տ. Կիրիլ պատրիարքը, տ. Հայկազուն, տ. Սերովը արքեպիսկոպոսները:

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլարյանը, Հանուն Հայաստանի կառավարության և ի դիմաց Հայ եկեղեցու գործերի խորհրդի, ողջունում է Տ. Կիրիլ պատրիարքի ներկայությունը ս. Եղմիածինի կամարների տակ և Հայկական ս. գրական հողի վրա:

Ընդունելությունն ավարտվում է Հայոց Հայրապետի գոհարանական աղոթքով:

Այց հոգևոր ճեմարան

Երեկոյան ժամը 7.30-ին Տ. Կիրիլ սրբազան պատրիարքը, իր շքախմբով և տ. Հայկազուն արքեպիսկոպոսի ու տ. Ներսես ծ. Վահագանի առաջնորդությամբ, այցելում է Հոգևոր ճեմարան:

Թանգագին Հյուրի մուտքը ճեմարանի հանդիսությանց սրահը ողջունում է զասահոսական կազմի, ուսանողության սրտագին ծափահարություններով:

Հոգևոր ճեմարանի տեսուչ վարդապետը մի համառոտ ակնարկի մեջ ներկայացնում է Հոգևոր ճեմարանի պատմությունն ու նրա գերջարերի ընթացքում Հայ եկեղեցու Համար Հոգևոր մշակութի զարգացման շնորհակալ աշխատանքներում: Հայր սուրբը տեղեկություններ է հաջորդում նաև Տ. Կիրիլ պատրիարքին հոգևոր ճեմարանի ներկա ուսանողության թվի, զասահոսական կազմի և ուսումնական ծրագրի մասին:

Այնուհետև տեսուչ վարդապետը մի համառոտ ակնարկի մեջ ներկայացնում է Հոգևոր ճեմարանի պատմությունն ու նրա գերջարերի ընթացքում Հայ եկեղեցու Համար Հոգևոր մշակութի զարգացման շնորհակալ աշխատանքներում: Հայր սուրբը տեղեկություններ է հաջորդում նաև Տ. Կիրիլ պատրիարքին հոգևոր ճեմարանի ներկա ուսանողության թվի, զասահոսական կազմի և ուսումնական ծրագրի մասին:



Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում。
Միքաղական պատրիարքին բացատրություններ է տալիս տնօրին Լևոն Խաչիկյանը:

Տ. Կիրիլ պատրիարքը խոսք առնելով իր գոհունակությունն ու ուրախությունն է հայունում, որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնչի տակ կենդանի ու պայծառ է կրթական այս հաստատությունը՝ կանգնած իր կոչման և առաքելության բարձրության վրա, և օրհնելով ուսանողությանը, դասախոսական կազմին, թելազրում է լինել որքան հավատքի, նույնքան և հայրենասիրության մարդք, դառնալու համար տիպար, նվիրյալ պաշտոնյաները Աստծու և ժողովրդի:

Տ. Կիրիլ սրբազն պատրիարքի խոսքը ընդունվում է բոլոր ներկաների կողմից ջերմորեն:

Այսուհետև սրբազն պատրիարքը տ. Հայկագուն արքեպիսկոպոսի և տեսուչ հայր սուրբի առաջնորդությամբ այցելում է դաստիարակության և հրաժեշտ առնում լավագույն տպագործություններով:

Երեկոյան ժամը 21-ին վեհարանի մեծ դահլիճում ցուցադրվում է 1962 թվականի մեռոնօրհնության կինոնկարը:


Այցելություններ Օշական և Մատենադարան

Հունիսի 5-ին՝ Երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, Երկու հայրապետները իրենց շքախմբով այցելում են Օշական՝ ս. Մեսրոպ Մաշտոցի գամբարան-եկեղեցին:

Եկեղեցու մուտքի առաջ երկու հայրապետները «Հրաշափառ»-ով մուտք են գործում եկեղեցի, ապա իջնում և. Մեսրոպ Մաշտոցի գամբարանը իրենց աղոթքն ու ուխտը կատարելու:

Հյուրիրը Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ հանգամանորեն ծանոթանանալու են՝ եկեղեցում վերջին երեք տարիների ընթացքում կատարված որմնանկարչական (ֆրեզո) աշխատանքների հետ՝ հայտնելով իրենց հիացմունքը:

Այսուհետև երկու հայրապետները, իրենց ուղեկիցներով, Օշականի, Աշտարակի գեղեցիկ և հովասուն այգիների միջով մեկնում են Երևան՝ այցելելու և. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇ ԳԵՐՈՎԳՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԲԱԿՈՒՄ ԹՑԱՆ ԱՄԽԱՎԱՀԻ ՏԵՂԱԿԱՎԱԼ, ՀՐ. ՄԱՐԳԱՐՅԱՆՆ,
Տ. ՎԱԶԳԻՆ ՎԵՀԱՓՈԽԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ, Տ. ԿԱՐՈԼ ՊԱՏԻՒԻՆԻԿԸ ՇԱԱՄՄԻՄՆՈՒԿ ԵՎ ՀԱՅ
ՄԻՆԻՄՈՒՄԾԻՒԹԻՒՆ ՄԻՎԵՏԻՆ ԱՌԱՋՄԵՒԾԻ ՀԱՅ ԵՎԵԼ ԵՑԻ ԳՈՐԾԻ ԽՈՐԴՐԻ ՆԱԽԱԲԱԿՈՒՄ Կ. ԴԱՎԻԴՅԱՆՆ

ժամը 11.30-ին Մատենագարանի անօրեն, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Լ. Խաչիկյանը շերմորեն դիմավորում է Տ. Կիրիլ պատրիարքին և Հայոց Հայրապետին ու նրանց ընկերակցող անձնավորությանց:

Մեծահարգ անօրեն գիտնականը Հյուրերին աեղեկությունների է Հազորդում Մատենագարանի ստեղծման, ձեռագրերի Հավաքման և ուսումնասիրման աշխատանքների մասին, ապա Հրավիրում նրանց գիտելու Մատենագարանի ցուցաբրահում միջնադարյան ձեռագրերն ու մանրանկարները:

Բարձրապատճիլ Հյուրերը գիտում են նաև ցուցաբրահի նախագավթում բացված ցուցաննդեսը, որը նվիրված էր Հայ և բոլղար ժողովուրդների դարավոր եղայրության և մշակութային կապերի պատմությանը:

Հյուրերը Հրաժեշտ են առնում Մատենագարանի անօրենից, գիտական աշխատանքներ կատարող անխոնչ կոլեկտիվից և մեկնում անմոռանալի տպավորություններով:

Ժամը 13-ին երկու Հայրապետները այցելում են բոլղար մեծ բանաստեղծ Յավորովի անվան զպրոցը և ծաղկեպասակ զնում «Հայերը» հոյակապ բանաստեղծության Հեղինակի արձանի վրա (գործ՝ արվեստի վաստակավոր գործիչ, նախկին բոլղարահայ Գր. Ահարոնյանի):

Դպրոցի դռան առաջ երկու Հայրապետներին զիմավորում են անօրենը, ուստից շական կազմն ու աշակերտությունը: Տնօրեն Խստիքայանը ողջունում է երկու Հայրապետների ներկայությունը բարիգալստյան ուղերձով:

Տ. Կիրիլ սրբազն պատրիարքը ողջունի և օրհնության խոսք է ասում՝ շնորհակալություն Հայտնելով շերմ ընդունելության համար:

Այցելություն Գերազուն սովետի նախագահության նախագահի տեղակալ

Հր. Մարգարյանին

Հանիսի 5-ին՝ Երկուշարի օրը, Հետ միշորէի ժամը 14-ին, բոլղար օրթոդոքս եկեղեցու պետ, նորին Սրբություն Տ. Կիրիլ պատրիարքը և Վեհափառ Հայրապետը, իրենց շքախմբերով, այցելություն են տալիս Հայկ. ՍՍՀ Գերազուն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հր. Մարգարյանին, երկանում, նախագահական պալատում:

Այցելության ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Վազգեն Ա. կաթողիկոսը բոլղար օրթոդոքս եկեղեցու պետին ներկայացնում է Հր. Մարգարյանին:

Այցելությանը ներկա էին նաև Հայկ. ՍՍՀ Գերազուն սովետի նախագահության բարուղար Գևալյանը, Հայկ. ՍՍՀ Մինիստրը-

ների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Գալաքյանը, Արտասահմանյան երկրների Հետ բարեկամության և մշակութային կապի ընկերության նախագահ Ռ. Պարսամյանը, Սփյուռքահայության Հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազայանը:

Այցելության ընթացքում, որն անցնում է շերմ մթնոլորտում, ճառեր են փոխանակում Հայոց Հայրապետը, Տ. Կիրիլ պատրիարքը և Հր. Մարգարյանը:

Պաշտոնական ընդունելություն

Հանիսի 5-ին՝ Երկուշարի օրը, Հետ միշորէի ժամը 15-ին, Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդողը, ի պատիվ Տ. Կիրիլ պատրիարքի, պաշտոնական ճաշկերույթ է կազմակերպում Հաղթանակի այգու «Արագիլ» ռեստորանում:

Ընդունելության մասնակցում են բոլղար օրթոդոքս եկեղեցու պետի շքախմբի անդամները և Նիկողոս միարոպոլիտը, առ Թաման վարդապետը, Վիլիանով բարուդար-սարկավագը:

Ճաշկերույթին ներկա են նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ շքապատված իր շքախմբի անդամներով, որոնց թվում՝ առյական և առ Անրուպի արքեպիսկոպոսները, առ Կոմիտաս, առ Պարզե, առ Վահան, առ Մաշտոց, առ Տիրայր եպիսկոպոսները, առ Ներսես ծ. վարդապետը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները, բոլղարահայ թեմական խորհրդի ատենապետ Օնիկ Ասլանյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը և այլ անձինք:

Հրավիրյալների թվում էին Երևանի բազուկնետի գործկոմի նախագահ Գր. Հասրայանը, Արտասահմանյան երկրների Հետ բարեկամության և մշակութային կապի Հայկական ընկերության նախագահ Ռ. Պարսամյանը, Սփյուռքահայության Հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համազայանը, Սովետա-բոլղարական բարեկամության ընկերության Հայկական բաժանմունքի նախագահ Գ. Անդրանիկյանը, Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արտասահմանից վերադարձող Հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի նախագահ Ս. Գալաքյանը, Խաղաղության պաշտպանության Հանրապետական կոմիտեի ներկայացուցիչ Հ. Խաչարյանը, ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ Ս. Գալաքյանը, Մատենադարանի տընօրեն, գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Խաչիկյանը, ՀՍՍՀ Մինիստր-



Երևան. Յափրովի արձանի մոտ

տըրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննեսյանը, նույն խորհրդի անդամներ Բ. Առաքելյանը, Դր. Քալասենյանը, Մ. Քարլյանը, բանաստեղծուհի Մարտ Մարգարյանը, քանդակագործ Գ. Անարոնյանը և այլ պաշտոնական անձինք:

ՀՄՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, առաջինը խոսք առնելով, նշում է, որ այդօրվա ընդունելությունը կազմակերպվել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հյուր Տ. Կիրիլ պատրիարքի պատվին, սեղանակիցներին ներկայացնում է օրվա պաշտոնական հյուրերին և առաջարկում առաջին բաժակը խմել բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ, Ն. Սրբություն Տ. Կիրիլ պատրիարքի կենաց՝ ցանկանալով նրան բաշխողություն, կորով և երկար կյանք, ինչպես նաև բուլղար ազնիվ ժողովրդին՝ բարօրություն և աշխարհին՝ խաղաղություն:

Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահը շեշտում է իր խոսքի մեջ Տ. Կիրիլ պատրիարքի կատարած մեծ աշխատանքը հանուն խաղաղության:

Ճաշկերույթի ժամանակ բաժակաճառեր են արտասանում Վեհափառ Հայրապետը, Սովետա-բուլղարական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի նախագահ Գ. Անունցը, ներգաղթ կոմիտեի նախագահ Ս. Դասպարյանը, բանաստեղծուհի Մարտ Մարգարյանը:

Ընդունելության վերջում Տ. Կիրիլ պատրիարքը հանդիս է գալիս հետևյալ ճառով.

Հարգելի նախագահ եկեղեցական գործերի խորհրդի,

Զերդ Մրություն,

Հարգելի սեղանակիցներ,

Ուրախությամբ բնդունեցի նորին Մրություն Ամենայն Հայոց կարողիկոս-պատրիարք Վազգեն Ա-ի երավերը՝ այցելելու ս. էջմիածնի Մայր Առաք, ուրեմն և այցելելու ձեր գեղեցիկ մայր հոգի: Ուրախացա, որովհետև գիտեի, որ դարձյալ պիտի տեսնեմ ձեր հայրենիքը և նրա գեղեցիկ համայնապատկերը, որ պարզվում է սբանչելի Արարատի ֆոնի վրա: Ուրախացա, որ քեզ միշտ ծամանակի համար պիտի տեսնեմ ձեր ծողովուրդը, որը մեզ մտ՝ Բուլղարիայում, վայելում է


բարձր հարգանք և անկեղծ սեր: Հանելի էր ինձ, որ պիտի կարենամ դարձյալ տեսնել ձեր եկեղեցական, հասարակական, տնտեսական և մշակութային կյանքի վերելքը:

Իսկ այս վերջինը ինձ և իմ ուղեկիցներին համար մեծ հետաքրքրություն է ներկայացնեամ: Ես երջանիություն եմ ունեցել ձեր երկիրը այցելելու 1958-ին՝ կատարյալ զարժան մեջ: Տեսա կերպարանքը ձեր հայրենիքին և անմռանալի ապավորություններ կրեցի Երևանի կրօնական, մշակութային և շինարարական վերելքից: Տրված լինելով որ այն ժամանակ գալիս էի Մոսկվայից, Սովետական Միուրյան մայրաքաղաքում մի ժամի օր մնալուց հետո, ինձ համար հստակ դարձավ, որ ձեր առաջադիմության և վերելքի բափր ընդհանուր է սովետական մեծ երկրի հետ, ու այս մասին դուք խրան կստանաք պայծառ և փառապահ Մոսկվայից:

Իմ այդ առաջին այցելության ընթացքում ինձ և իմ հարգելի ուղեկիցների վրա զորավագուրություն գործեցին ձեր կառավարության և հասարակայինության շանելոր պահպանելու հայ ժողովրդի պատմական, հոգեկան և մշակութային անցյալի հուշարձանները: Իսկ այդ անցյալը հարուստ է: Հայերը ժողովրդական մշակութային կյանքին մեջ մոտք են գործել շատ վաղուց և իրենց զգալի լուսան մուծել համամարդկային մշակութային գնաճարանին մեջ:

Հայ ժողովրդի ողբերգական անցյալը բազմարի հայերի ցրել է աշխարհով մեկ: Նրանք ամենուրեք պահպանում են իրենց ազգային գիտակցությունը, ու նրանց մեծ մասը չի դադարել մտքով և սրտով կապվելուց իր գեղեցիկ հայրենիքին հետ: Աշխարհի բոլոր ծայրերում նրանք՝ սփյուռքի հայերը, պահպանում են Հայաստանի անունը և կապված են երանցյալի ու ներկայի հետ:

Հայ ժողովուրդը ունի բարձր համակություններ և առաքինություններ, որոնք երան երջանիկ կյանք ստեղծելու կարող են դարձնում: Այս է և այն հաճախամանքը, որ հայ ժողովուրդը Սովետական մեծ Միուրյան ժողովուրդների հետ միասնաբար պարում է և մեզ համոզում, թե Սովետական Հայաստանը ներքինս ավելի պիտի առաջադիմի: Հայ ժողովրդին անկեղծութեն ցանկանում եմ առաջադիմություն և վերելք՝ կյանքի բոլոր մարդի մեջ: Կասկածից վեր է, որ ժողովուրդների գերազույն բարիքն է ինալազուրյունը, ու մեր մաղթանեների կարգին առաջին անդը պետք է գրալի ամբողջ աշխարհին դարձյալ խաղաղություն մաղքելը, որպեսզի խաղաղ պայմանների մեջ սովետական ժողովուրդները իրենց տեսական, մշակութային և հանրային բարեկեցության գործ շարունակեն:



Ոսկեգույզ հայրապետական աստ. Վեհափառ Հայրապետի նկարը. S. Կիրիլ պատրիարքին



Բուլղարական սրբանկար. Ավեր Մայր Աթոռին, Տ. Կիրիլ պատրիարքից

Կեցցե հայ ժողովուրդը, նրա կառավարությունը և Հայաստանի ստեղծագործական ուժերի բազմակողմանի վերելքի աշխատավորները:

Բուլղար օրթոդոքս եկեղեցու պետի պատվին տրված ճաշկերույթն անցնում է զերմ, սրտագին մթնոլորտում:

**Տ. Կիրիլ պատրիարքը հրաժեշտ է առնում
Մայր Աթոռից**

Հունիսի 6-ին՝ երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, երկու հայրապետներն ի-

րենց շքախմբերով հավաքվել են վեհարանի ընդունելության սրահը:

Երկու հայրապետները հանդիսավոր իրադրության մեջ ստորագրում են Հետևյալ հաղորդագրությունը, որպես վկայություն Հայց առաքելական եկեղեցու պատմական կենտրոն ս. Էջմիածնի կամարների տակ իրենց ողջագուրման և ի Քրիստոս սիրո իրենց եղբայրության:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ողորմածությամբն Աստուծո Ամենակալին, Նորին Սրբություն **Տ. Տ. Կիրիլ պատրիարք բուլղար օրթոդոքս եկեղեցվո, Եղբայրական հրավերովը Ամենայն Հայոց կաթողիկոս, Նորին Սրբություն **Տ. Տ. Վազգեն Ա-ի, հունիսի 2-ից մինչև հունիսի 6, այցելեց Մայր Աթոռ և Էջմիածն՝ ուղեկցությամբ Սլիվենի միտրոպոլիտ գեր. տ. Նիկողիմ արքեպիսկոպոսի, հոգ. տ. Խոան Վարդապետի և բարեշն. ավագ սարկավագ դոկտ. Վասիլի Վիլիանովի:****

Սոֆիայից մինչև Երևան պատվիրակության ընկերակցում էին նաև Բուլղարիու և Ռումինիու թեմերի հայոց առաջնորդ գեր. տ. Տիրայր Նապ. Մարտիկ-



Երկու հայրապետների ողագործման պատմական վկայությունը (նույն 6)

յան և Բուլղարի հայոց թեմական խորհրդի ատենապետ տիար Օսմիկ Ապան-
յան:

Տ. Տ. Կիրիլ պատրիարք և Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոս, այս երշանիկ
առիթով, ի Քրիստոս սիրով, ողագործվեցին Փրկչի իշխան տուր սեղանի
առաջ և միասին իրենց աղոթքով առավել ամրապնդեցին դարերի հոլովոյ-
թով զարգացած բարեկամության կապերը Հայաստանյաց առաքելական և

Բուլղարի օրթոդոքս եկեղեցիների միջև՝ քրիստոնեական միության ոգիով և Բնուագա առավել սերտ գործակցության կամեցողությամբ:

Երկու պատրիարքները շերմ սիրով աղոթեցին առ Աստված, որ իրենց գլխավորած երկու քոյլը եկեղեցիները անսասան և ծաղկալ մնան ու իրենց հոգևոր սուրբ առաքելությունը շարունակեն իրենց ժողովորդների ծոցում, ժողովուրդներ, որոնք մեր օրերին աճում ու զարգանում են խաղաղ և մեծամեծ հավանամներով, իրենց վերածնված ու նոր կյանքի կոչված հայրենիքների պայծառ երկնքի ներքեւ:

ՀՍՍՀ Գերագույն սովորության նախագահի տեղակալ Հր. Մարգարյան, ի ներկայություն ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի աղջիտեր նայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաբյանի, հունիսի 5-ին ընդունեց Նորին Սրբություն **Տ. Տ.** Կիրիլ պատրիարքին և Նորին Սրբություն **Տ. Տ. Վազգեն Ա. կաթողիկոսին** իրենց շքախմբի անդամներով: Տեսակցությունն անցալ բարեկամական շատ շերմ մթնոլորտում:

Նորին Սրբություն **Կիրիլ պատրիարք** իր շքախմբի անդամներով այցելեց Ա. Հոխիսիմեի, Ա. Գայանեի, Ա. Գեղարդի և Օշականի եկեղեցիները, Գառնիի տաճարի ավերակները, ինչպես նաև Երևանի Ա. Մեսրոպի անվան Մատենադարանը և բոլղար մեծ բանաստեղծ Յավորովի արձանը, որ գետեղվեցին ծաղկեապակներ:

Վեհափառ Վազգեն Առաջին Հայրապետը հունիսի 4-ին հանդիսավոր Ա. պատարաց մասուցեց սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, որին ներկա եղավ բոլղար եկեղեցու պատվիրակությունը՝ ի գումա ունենալով Նորին Սրբություն Կիրիլ Ա. պատրիարքին:

Հայ և բոլղար եկեղեցիներու երկու հայրապետների այս հանդիպումը և ըրանց գրուցները ընթացան անկեղծ և սրտագին բարեկամության ոգով և ճշմարիտ սիրով ի Քրիստոս հաստատելով հայացքների լիակատար նույնությունն մեր օրերի քրիստոնությունը և մարդկությունը հուզող կարևոր հարցերի վերաբերյալ:

Երկու հայրապետները մի անգամ ևս հայտնեցին իրենց համոզումը, թե քրիստոնյա բոլոր եկեղեցիների մեկտեղումը, փոխադարձ ճանաչումը և համագործակցությունը պետք է առավել խորանան և հետզիւտե առավել գորավոր գործուն հանդիսանան աշխարհում և ժողովուրդների կյանքում, սուրբ Ավետարանի ճշմարտությունների և պատգամների լույսին տակ: Հատկանի աշխարհի խաղաղությունը պահպանելու գործուն անհրաժեշտ պետք է նկատել բոլոր եկեղեցիների և հավատացյալների միակամ և անվերապահ աշխատանքը, իրեն մեր օրերի աստվածահան առաջնահերթ գործ:

Ամեն պատերազմ ժխտում իսկ է Քրիստոսի Ավետարանի:

Երկու հայրապետները իրենց եկեղեցիների և հավատացյալ ժողովուրդների անունից կոչ են անում բոլոր եկեղեցիներին և բոլոր բարի կամքի տեր մարդկանց, որպեսի նրանք միանան՝ պաշտպանելու համար խաղաղության սրբազն դատը, ընդուն պատերազմ սանձազերծող չար ուժերի, որոնք այնքան ոճիրներ ու ավերներ են գործուն Վիետնամում ամեն օր, ամեն ժամ՝ բնաշինչ անելով մի անմեղ ժողովուրդ, և որոնք այս օրերին իսկ նոր փորձեր են կատարում պատերազմի կրակը տարածելու Մերձավոր Արևելքի երկրների վրա:



Հայոց պատմութեան ստուգութիւնը և շնորհակալութեան (Հոկտեմբեր 6)

Նորին Սրբություն S. S. Վազգեն Ա. կաթողիկոս և Նորին Սրբություն S. S. Կիրիլ պատրիարք հրաժեշտ տվյալ միմյանց եղբայրական համբույրով՝ վերստին համեմիպելու և միատեղ աղոթելու ջերմ ու միսիթարիչ մալթանքներով:

5 հունիս 1966

Մայր Աթոռ

Այսուհետեւ երկու հայրապետներին, ստորագրության համար, ներկալացվեց բոլղար պատրիարքի ս. էջմիածին կատարած պատմական այցելությունը նվիրագործող հետեւյալ հուշագրությունը՝ բուզդարերեն և հայերեն լեզուներով.

Աստուծո ողբումությամբ Մենք՝ Վազգեն Ա., պատրիարք-կարողիկոս Ամենայն Հայոց, և Կիրիլ՝ պատրիարք բուլղար օրբողոք եկեղեցով, այսօր՝ Կիրակի, 4 հունիս 1967-ին, ողջագութեցինք սուրբ էջմիածինի կամարների տակ՝ ի վկայություն ի Քրիստոս սիրու և եղայրության մեր եկեղեցիների մեջ:

«Եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր: Ամէն:

Սուրբ էջմիածին

4 հունիս 1967

Ժամանակակից 10.30-ին երկու հայրապետներն իրենց շքախմբի և Մայր Աթոռի միաբանության անդամներով լուսանկարվեցոց հետո, առաջնորդվեցին Մայր տաճար՝ էջման ս. սեղանի առաջ մի անգամ ևս իրենց քրիստո-

նեական եղբայրության ուխտը ամրապնդելու և աղոթելու: Այսուհետեւ ս. Գայանեի վանք այցելությունից հետո, ժամը 11-ին, մեքենաների շարասյունը ուղղվում է գետի երևանի օդանավակայան:

S. Կիրիլ սրբազն պատրիարքին անձամբ ճանապարհում է Հայոց Հայրապետը՝ շրջապատված արքեպիսկոպոսներով, եպիսկոպոսներով, Մայր Աթոռի և Գերագույն Հոգեվոր խորհրդի անդամներով:

S. Կիրիլ պատրիարքին ճանապարհում են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ և Դալլայյանը և այլ պաշտոնական անձինք:

Ժամը 11.45 բուզեին ինքնաթիռը ողջերթի բարեմաղթությունների և ծափերի ներքո բարձրանում է եթեր՝ ուղղություն վերցնելով գետի Մոսկվա:

Բարի ճանապարհ քույր եկեղեցու հոգևոր պետ, հայ եկեղեցու և հայ ժողովրդի ազնիվ բարեկամ, նորին Սրբություն S. Կիրիլ սրբազն պատրիարքին և նրա շքախմբի անդամներին:

